ՆՈՐ-ԴԱՐ

№ 183 ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 16 Հոկտեմբերի 1896 Չորեքշաբթի 16 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 183

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 3 կ., իրկամների համար կրկնապատիկ

ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՆ, ԱՐՁԱՒԻՐ ԵՒ ԴԱՐԵԳԻՆ, ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ, ՁՈՒՐՁԱՆԻԿ, ՀՌԻՓՍԻՄԷ ԵՒ ԹԱԳՈՒՀԻ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՆԵՐԸ սրտի խորին ցաւօք յայտնում են առաջիններիս իրենց հօր, երկրորդների՝ հզօր, երրորդների՝ սկեսրայր և վերջինիս իւր տապեր Մոսկուայ սուրբ Գէորգ եկեղեցու միաբան

ՄՈՒՇԵՂ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

յանկարծական մահը։ Ամբիծքը կկատարուի ամեն օր երեկոյեան ժամը 5 ½-ին, Մոսկուայ սուրբ Գէորգ եկեղեցու գավիթում։ Յուղարկաւորութեան հանդէսը ուրբաթ, հոկտեմբերի 18-ին, երեկոյեան 3 ½ ժամին պէտք նոյն եկեղեցին. Թաղման և օժման հանդէսը հետեւեալ օրը։ Պատարագը կրկսուի ժամը 10-ին 3—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Դատախազական սերնդին։
Քրոնիկոն.—Վերայի գերմանատան խնդիրը։ Ուսումնարաններ։ Փողային ծրարներ։ Իշխ. Ամատունի։ Դիւղատնտեսական ուսումնարան։ Արեան շահագործութիւն։ Նշանագրեալ։ Շաքարի գինը։ Ոստիկանական ծախք։ Ապալքաքից։ Դանձայից։ Շուշուց։ Ծալկայից։ Նոր-Նախիջեանից։
Նամակ խմբագրութեան։
Երկու խօսք Զուգդիդի մասին։
Մամուլի շուրջը։
Թղթակցութիւններ.— Նամակ Ամերիկայից—Գինգատոն։
Քաղաքական. Թրքական գործեր։ Քաղաքական լուրեր։
Հեռագրեր։
Թեր և Դէմ։
Քանասիրական.—Գիւղի ճամփէն։
Տիզերկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 15-ն հոկտ. 1896 թ.

ԴԱՍԱՏԻԱՐԱԿՈՒՈՂ ՍԵՐՆԴԻՆ

Մեր յոյսը—մեր մանուկ սերունդն է. այս բառերով մխիթարում ենք մենք մեզ ամեն անգամ, երբ գառնալով մեր շուրջը տեսնում ենք բոլորովին խախտուած համոզմունքներ, աւերակ դարձած հիմնարկութիւններ ու անձեռնմխելի մնացած գործեր։ Լաւ է որ դեռ կայ այդ մխիթարութիւնը մեր մէջ, առանց որի դժուար կլինէր ապրել և խաւար յուսահատութիւն կը-

մարդ «վինչրան էլ ապրում է, միշտ սովրի»։

Ճաւ է մեզ ասել, որ մեր մանուկ սերունդը՝ աշակերտները և ուսանողները ըստ մեծի մասին չեն սովորում։ Ճշմարիտ է, նրանք պնում պակս են ուսումնարան, համազգեստ են հագնում, դասերն էլ պատրաստում են, բայց այդ բոլորն աւելի ձեական է և կարծես կրկնում լինեն անգիտակար —«այդ բոլորը պէտք են դասարան փոխելու, վկայագիր առանալու համար»։ Այդպիսի ուսումը ուսում չէ, այլ ծուխիակութիւն։ Ո՛չ աշակերտների և ոչ էլ ուսանողների մէջ ենք տեսնում մի որևէ աւարտի մասին պիտութիւն, և ընդհանրացնութեան սէր։

Աշակերտը վերջացնում է գիմնազիոնը և բացի լրագրից, (եթէ միայն պնի այդ էլ կայ) ուրիշ ոչինչ չի կարդում։ Բացի իւր մասնագիտութիւնից, ուրիշ ոչինչ չի լսում համալսարանում. կան այնպիսիները էլ, որոնք համալսարան չեն էլ այցելում անգամ։

Հետեանքը պարզ է՝ համալսարանը աւարտելուց յետոյ բժիշկը դառնում է արհեստաւոր, իրաւաբանը — վաճառական, ուսուցիչը — մեքենայ, իսկ հրապարակախօսը — միակողմանի գրող։ Ասպարէզ են գուրս գալիս, իրենց համար մի նեղ շրջանակ են ստեղծում—և այդ շրջանակից գուրս ոչինչ չեն ուզում լսել ու տեսնել։ Նեղ հայեացք, երկայնամտութեան բացակայութիւն և յառաջադիմելու ոչ մի ձգտում. ահա թէ ինչ պատրաստութիւն են քերում իրենց հետ նրանք, որոնց վրայ դնում ենք մենք մեր յոյսը։

Այդպէս չի լինի այն ժամանակ, երբ մեր սերունդն ուսման ընթացքում աշխատի ճոխացնել իւր պիտութեան պաշարը, ընդլայնել իւր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԻ ՃԱՄՓԷՆ

«Գնաշատը մութը տեղը լիս ա տալի»։

Ժող. ասած.

I.

Հէր գիւղը նիստն էր տուած սարահարթի վրայ՝ բոլորովին հանդի գլխին։ Սարահարթի երկու կողերը թեք գրութեամբ իջնում էին երկու հաղիւակաց ձորի յատակը։ Գիւղը հանդի գլխին լինելով այն անյարմարութիւնն ունէր, որ «վերաչաղ» էր՝ այսինքն՝ բևեռած սայլի գլուխը գիւղին մօտենալիս զառիվերը էր ընկնում։ Զառիվերին գիւղում «Գապի գիր» կամ «Գիրեր» էին ասում, որ վերսից աւելի երկարութիւն ունէր։ Քարասիրտ պիտի լինէը մարդ, որ ամառները խրձան կամ խոտի սայլը Գապի գիրով բարձրանալիս տեսնէր ու չխղճահարուէր։ Իպէթ գոմէշը հանդի ներքին ծայրիցից սայլի տակին որոճալով հանդարտ քաշում էր մինչև Գապի գիրը։ Գիրն աչքովն ընկնելիս, ինչ ջանով գոմէշ էլ լինէը, լաչը գոց էր ընկնում։ Բերանը փրփրած՝ լեզուն նանած, լոշին տալով (սաստիկ հևալով) խեղճ կենդանին մինչև գիւղը մտնելը քան տեղ չէքում էր։ Սրտաշարժ տեսարան է ներկայացնում գոմշի չոքելը կոշտ՝ անողորմ գիւղացու առաջ։ Մինչդեռ գոմէշը չոքում է, որ, լարելով բոլոր այժը, տեղաշարժ անի ծանրութիւնը, անողորմ գիւղացին, գոմշի կողմից պաղութիւն համարելով չոքիլը, սկսում է անգութ կերպով թակել նրան։ Սոսկալի աղաղակ բարձրացնելով, կատաղում՝ քաֆր է դառնում գիւղացին։ Նա ձեռի ճիպոտը մաշելուց յետ չատ անգամ քարի, փայտի է ման գալի, որ գոմշի ճակատովը սայ էլ ոչ ծակող, ոչ տէր, ոչ ձագ ժամանակը աերեով կերակրող, ոչ գոմշի ուս է մնում, որ կատաղած գիւղացու հայհոյանքից պրծնի։

Գատաղած ժամանակը գիւղացիներից մէկը, ճիպոտը գոմշի գլխին մաշելուց յետ, աշխատում էր կոթը գոմշի աչքը

կոխի։ Հոքած գոմէշը, տեսնելով վայրագ աիրոջ մտադրութիւնը, երկու աչքը խրփած, միայն պոզին էր անում։ Անտեղի ու սոսկալի պատժից ազատուելու համար, գոմէշը մի կողմից աշխատում էր սայլը պահի, որ յետ չվազի, միւս կողմից գունչը տափին էր դնում, որ աչքերը թազցնի։

Գիւղացու ընկերը, փոխանակ ճիպոտի կոթն ընկերոջ ձեռքից խլելու, փորը բռնած ծիծաղում էր ընկերոջ հնարագիտութեան վրայ...

Սոսկալի յաւից տնքում էր գոմէշը։ Ինչպէս քաջի արտասուքը նշան է մեծ կորստի, այդպէս էլ գոմշի տնքոցն է նշան մեծ նեղութեան։ Գիւղացին այդ պիսի դէպքերում, փոխանակ կենդանուն սփոփելու, որն ընտանիքի համար իրենց աւելի է աշխատում, փոխանակ թեթև բևեռելու, որ գիերներում հեշտ քաշի,— գաղան կտրած սկսում է թակել, կոշտահան անել։

II.

Գիւղացիք բոլորն էլ գիտէին որ Գապի գիրը «լծկանի մահ ա», գիտէին

որ «Գապի ճամփէն ա խալխին քիսաբացնողը»,—այդ բոլորն իմանում էին. այն էլ՝ փորձով։

Այդ ճամփի երեսից չատերն էին լծկան առնելով պատքի տակ ընկել. որի գոմէշն էր սայլի տակին ճաքել, որի սայլըն էր պրանուել՝ ուլախով-զատով կոզքի ձորն ընկել, բայց՝...Բայց նոր ճամփա չէին բաց անում։ Չէին բաց անում ոչ թէ նրա համար, որ տեղ չկար։ Տեղ կար, այն էլ՝ հիանալի տեղ։ Նոր ճամփէն, վեր կենալով Գապի գիրերից քիչ բարձր, լանջի պատով հորիզոնական ուղղութեամբ գուրս է գալի գիւղամէջ։ Ինչն էր արգելում, ուրեմն։ Այն, որ այդ ուղղութեամբ նոր հասարակական ճանապարհը պիտի անցնէր չորս մարդի այգով, որոնցից իւրաքանչիւրը պիտի յօգուտ հասարակութեան զրկուէր մի սաժէն լայնութեամբ, քսան կամ երեսուն սաժէն երկայնութեամբ սայա (բաց) հողից,—ահա ամբողջ արգիլքը, ահա այն դառն տանջանքների աղբիւրը, որ կրում էին ամբողջ գիւղի թէ մարդիկ և թէ՝ անասունները։ Նոյն իսկ այն չորս մարդիկ մանները են բաց անում և դագաղներ ու սակրներ ցրիւ տալիս։

—

Ուսումնարաններ. Կովկասի ուսումնարանական վարչութիւնը իրաւունք է տուել թէ Թիֆլիսում և թէ ուրիշ տեղերում 20-ից աւելի նոր ուսումնարաններ բանալու և եղած ուսումնարաններում էլ նոր դասարաններ ու բաժանմունքներ աւելացնելու։

—

Փողային ծրարներ. Մայրաքաղաքներում արդէն միքանի տարի է որ փողի ծրարները ուղղակի տուն են տանում. բայց ցաւալին այն է, որ այդ յարմարութիւնից զրկուելու է Թիֆլիսը։ Պատահեցրական վարչութիւնը այդ յարմարութիւնը մտցնելը հնարաւոր չէ համարում առայժմ, որովհետև փողոցում կարող են կողոպտել նամակատարներին... O tempora, o mores !

—

Իշխան Ամատունի։ Երբ իշխ. Ամատունուն յայտնեցին դատաստանական վճիռը, դատախազի օգնականը պահանջեց, որ իշխանը աղատուի 50 հազար ր. գրաւականով. բայց դատարանը բաւական համարեց և առաջուայ գրաւականի գումարը։ Դատախազի օգնականն այդ վճռի դէմ մասնաւոր բողոք էր ներկայացրել դատական պալատին։ Հոկտ. 12-ի նիստում պալատը վճռեց անհետաձգ թողնել այդ բողոքը։

—

Գիւղատնտեսական ուսումնարան։ Թիֆլիսում բացուելիք գիւղատնտեսական ուսումնարանի վրայ լինելիք ծախքերին քաղաքն էլ ցանկութիւն է յայտնել մասնակցելու։ «Նով. Օբոզ»-ի ասելով նահանգական վարչութիւնն արդէն քննել է այդ հարցը և յանձնել է գործը երկրին բարձրագոյն իշխանութեանը։ Այսպիսով յոյս կայ որ քաղաքս չուտով կունենայ այդ ցանկալի և օգտակար հաստատութիւնը։

—

Արեան շահագործութիւն. Մի օտարազգի խնդրում է քաղաքային վարչութիւնից իրեն տալ քաղաքային սպանդանոցի արեան շահագործութիւնը։ Դրա փոխարէն նա խոստանում է ձրիաբար սպանդանոցի յատակը ցեմենտով ծածկել, սպանդանոցը և շրջակայքը մաքրել կեղտոտութիւններից և այդ ամե-

դըն ամենքից շատ նեղութիւն քաշողները էին, ըստորում գիւղի ճամփա լինելով, նեղքի հանդում շատ վար ու ցան ունէին. բայց դրանք լաւ էին համարում այդքան տանջանքները տանեն տալին տաներկու ամիս, որդեցորդի՝ քան թէ իրենց մի կտոր հողից զրկուին, ուրից, բացի մի քանի կիտուկ խոտից, ոչինչ չէին ստանում, որովհետև տեղը քարճուտ էր։

Սակայն գիւղացիք այլևս չէին կարող դիմանալ, որովհետև Գապի գիրերի հատցրած վնասներն օրէցօր զգալի էին դառնում, և հենց որ ճամփի երեսից մի քամբախտութիւն էր պատահում, ամբողջ գիւղը տրտունջ էր ընկնում, ու հայհոյանքներ էին, որ ուղղւում էին այն չորս տան հասցէին։

III.

Յուլիս ամիսն էր։ Հուն որ արևի տակն էիը զրիլ՝ ձեռաց կըխաչուէր։ Մի խրձան սայլ մտնենում էր Գապի գիրերին։ Մի հատակաւոր մարդ գոմշերի ուսին էր նստած, մի երեխայ՝ եզնանց։ Սայլն անվնաս մի

Ա. Ղազանչեան

(Վերջը յաջորդ համարում)։

— Ես էլ չգիտեմ, թէ ինչ է ասելու Ղազանչեանը, բայց ինչ որ ասելու է, ես էլ նոյնը կ՚ասեմ։ Ես ինձ համար ոչ մի ուրիշ ճանապարհ չեմ տեսնում, քան թէ ինքնասպանութիւնը։ Ես ինձ ոչ մի ուրիշ ելք չեմ տեսնում։ Ես ինձ համար

յացնում, մինչև աշնան վերջը սրա միջից չեն չքանում վարդերը, ծաղիկները։ Ի-դուր չէ ֆրանսիացի այգեպանի տարեկան 2000 ռուբլի ռոճիկ ստանալը իշխ. Մինգրելսկուց։

Ջուգդիդից հեռու գտնուող գիւղացիք, որոշ պարապմունքների հետ միասին բարոյապէս մաքուր կեանք են անցկացնում. կանայք և աղջիկները ամբողջ օր զանազան ձեռագործութիւններով են զբաղուած լինում և նրանց ապրուստն առաւել լաւ է, քան թէ Ջուգդիդին մօտիկ ապրողներինը։

Ջուգդիդի մի քանի դիւղեր այս ան ցած ձմեռ սաստիկ ձիւներից մեծ մեծ վնասներ կրելով, ներկայումս ողբալի դրութեան մէջ են,ոչ թէ միայն օրուայ հացի են կարօտ, այլ և ապրելու բնակարան անդամ չունին թշուառները։ Առայժմ նրանց մասին հոգացողութիւնը յանձնուած է Աստուծոյ նախախնամութեանը։

Մատեան։

Ջուգդիդ, 5 հոկտ.

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

«Նոր-Դար»-ի երէկուայ համարում մենք մի քանի կէտեր առաջ բերինք Գովկասի ուս. չրջանի հոգաբարձու պ. Եանովկու «ազգակացութիւնից», որին նա հասել է իւր երկարամեայ պաշտօնավարութեան ընթացքում։ «Նովոյէ Սրեմյա»-ն մի խմբագրական յօդուածի մէջ խօսելով այդ «ազգակացութեան» մասին, առաջ է բերում նրա միջից հետեւեալ կէտը.

> Մինչև այժմ մտութիւն ու կապ չի եղել և չէր կարող լինել զանազան վարչութիւնների կրթական միջոցների միջև, որը այնքան անհրաժեշտ է Գովկասի բազմազան ցեղերի համախմբման մէջ.—ցեղեր, որոնք միշտ խաղաղասիրութեամբ չեն վերաբերուել իրար, առանձնապէս դէպի մեզ, ռուսներիս։

Պ. Եանովկու այս վերջին խօսքերին, ինչպէս նկատում է «Նով. Սրազ.», «կովկասեան մի լրագիր» անհամապատասխան նշանակութիւն էր տուել։ Ինչպէս երևում է, «Նով. Աբազ.» ասած այդ լրագիրը «2երնոմորսկի Վեստնիկ»-ն է, որը, յիրաւի, պ. հոգաբարձուի յիշեալ «ազգակացութեան» առթիւ դրած մի առաջնորդող յօդուածի մէջ հետեւեալն է ասում.

> Ուս. չրջանի պ. հոգաբարձուն պաշտօնապէս հաստատում է այն, ինչ որ յաճախ ասել է «2երնոմորսկի Վեստնիկը, և որի դէմ յաճախ խիստ յարձակումներ են գործել կովկասեան մամուլի մի քանի օրգաններ։ Այսինքն, պ. հոգաբարձուն ասում է, որ Գովկասի բնակիչները այնպիսի ազգութիւնների համախմբումն են ներկայացնում, որոնք բարեկամաբար չեն վերաբերում իրար և մանաւանդ դէպի մեզ, ռուսներիս։

Այսպիսով «2երն. Վեստ.»-ը պ. հոգաբարձուի խօսքերին քաղաքական նշանակութիւն է տալիս։ Մինչդեռ, ինչպէս նկատում է «Նով. Աբազ.», այդպիսի (քաղաքական) խնդիրները լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ չեն մտնում, իսկ նոքին գործերի մինիստրութեան գլխաւոր ներկայացուցիչները, որոնք և հսկում են երկրի կարգապահութեան վրայ, բարձր կառավարութեան առաջ միշտ վկայել են, որ Գովկասի բնակիչները կատարելապէս հաւատարիմ են ռուս իշխանութեանը։ Այդ վկայութեանը հակասող փաստեր «2երն. Վեստ.»-ը չի բերում։

> Մենք կարծում ենք,—ասում է «Նով. Որ.».—որ այն, ինչ որ ասում է պ. հոգաբարձուի հաշուի մէջ, վերաբերում է բացառապէս ժողովրդական կրթութեան գործին, և տեղացիների դէպի ռուսներն ունեցած ոչ միշտ բարի յարաբերութեան վերաբերեալ խօսքերի տակ հասկացւում է ռուսաց լեզուի թոյլ տարածումը տեղական դպրոցների մէջ։ Բայց այս վերին աստիճանի ոչ-ցանկալի երևոյթի պատճառը, ինչպէս համոզուած ենք մենք, ոչ թէ տեղական տարրի դէպի ռուս ազգութիւնն ունեցած թշնամական յարաբերութիւնն է, այլ կրթութեան թոյլ տարածումն առհասարակ այս երկրի մէջ, կրթութեան մեթոդների անկատար լինելը և այլնԱյս ասց լեզուի ուսման ամենալաւ մեթոդը պէտք է համարել մայրենի լեզուի օգնութեամբ եղած ուսուցումը. այս հայեացքը յայտնել են և յայտնի մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին, պրոֆ. Լամանսկին և ուրիշ շատերը։

** «Նովոյէ Վրեմյա» վերջին համարում կարդում ենք.

> Հետաքրքրական մի պատահ կին, Մէլնիկովա ազգանունով, նստած էր մեղադրեալների նստարանի վրայ Պետերբուրգի նահանգական դատարանի առաջին բաժնում։ Նրան մեղադրում էին 1893—1895 թ. գործած վաշխառութիւնների համար։ Իւր վաշխառութիւնը նա գործ էր դնում գլխաւորապէս աղքատ դասակարգի մէջ, առնելով մի շաբաթ ժամանակամիջոցի համար 3-ից մինչև 40 տոկոս։

Առաջ է բերւում նրա գործունէութիւնից մի քանի դէպքեր. այսպէս օ. բինակ.

> Մէկը փոխ է առնում նրանից մի ռուբլի և շաբաթական 25 կ. տոկոս տալիս։ Միւսը վերցնում է մի ռուբլի և 125 ռուբլու մուրհակ է տալիս և այլն։

Նահանգական դատարանը նրան զրկել է բոլոր իրաւունքներից, արտօնութիւններից և դատապարտել է 8 ամսուայ բանտարկութեան։

> Բայց ո՛րքան վաշխառուները անպատիժ են մնում, որոնք սարդի նման ծծում են խեղճ ու աղքատ դասակարգի արիւնը։ Իսկ այդպիսի չարագործութիւնները հետևանք են հանրամատչելի վարկ չինելու ու ժողովրդի դեռ խաւարի մէջ խարխափելու։

ԳԵՂԸՐՈՒԵՍՑ ԵՒ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿՈՎՍԿՈՒ «ՕՊՐԻՉՆԻԿՆԵՐ» ՕՊԵՐԱՆ

(Ս.-Պետերբուրգի մեր թղթակցից)

—

Շարաթ օր, հոկտ. 5-ին, առիթ ունեցայ ներկայ լինելու Հայկովսկու «Опричники» օպերայի գլխաւոր փորձին։ Ա՛ա Մարինսկի թատրոնի նշանաւոր երևոյթներից մէկն է։ Ինայելով, որ այս օպերան տասը տարի առաջ էլ խաղացուել է, այնուամենայնիւ սրա ներկայացումը հատա ակութեան համար բոլորովին նորութիւն է։ «Օպրիչնիկները»-ը Հայկովսկու տաղանդի երիտասարդ չքրջանի արդիւնքն է, ուստի և կրում է մի տեսակ թարմ և երիտասարդական բնաւորութիւն։ Հայկովսկուն յատուկ հանդիսա և տպաւորիչ շնչող եղերերգական բնաւորութիւնը այստեղ էլ տիրապետող է հանդիսանում. բայց համեմատելով նրա միւս օպերաների հետ, այստեղ ժողովրդական շարժումները ներկայացնող ահեղ և ուժեղ երաժշտական արտայայտութիւններ կան։ Այսպէս երկրորդ արարուածի երկրորդ պատկերը իւր տպաւորութեամբ կարող է համեմատուել Մէյէրբերի օպերաներում գտնուած ժողովրդական շարժումն արտայայտող տեսարանների հետ, օրինակ «Գուգենօտներ»-ի IV արար. խմբի, կամ «Մարգարէի» անաբապտիստների տեսարանի հետ։ «Օպրիչնիկներ»-ի միւս կտորներից աչքի են ընկնում հիանալի երգը և Նատալիայի արիան առաջին արարուածում. նրա վերջնական դուէտը Անդրէյի հետ և Անդրէյի մօր կերը ընդհանրապէս։ Դէկորացիաների և օպերային պարագաների մէջ առանձին չքնդութիւն չէր նկատւում, ի բաց առեալ զգեստները։ Դերակատարները բացի Սլավինայից թոյլ էին։ Տ. Սլավինան—Անդրէյի մայրը—թէ ձայնի,թէ երաժշտականութեան և թէ խաղի կողմից վերարուեստօրէն կատարեց իւր դերը։ Ընդհանրապէս չի կարելի չողջունել այս վերին աստիճանի հետաքրքրական օպերայի ներկայացումը։

Ն. Բ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

ԿԻՆԳՍՏՈՆ, 8 հոկտեմբերի.—Hypnotism, որ կրնանք մաքնիսացում կոչել գիտութեան մէկ ճիւղ է դարձած և ամէն օր նոր աշակերտներ կը ծնի։ Մագնիսացման ազդեցութեան տակ կը քնացուին, կը հնազանդուին, կը յանցուին, վերջապէս ամեն ազդեցութիւն կրպործածեն։ Ձիկագոյի մէջ ատամնարոյժ մը ձեռքի մէկ քանի շարժումներով կը քնացունէ զոք և ակռաները կը քաշէ առանց դոյզն ցաւ պատճառելու գործողութեան ենթակայ եղող անհատին։ Dr. Sahler վերջերս ամենազարմանալի դերն կատարեց. հեռախօսի միջոցաւ ձեռքի երեք շարժումներով քնացուց հեռախօսի միւս կողմն կանգնող երիտասարդն. հեռաւորութիւնն երկու մղոն էր, մին քաղաքին մէկ կողմն և Dr. Sahler միւս կողմն։ Sahler իւր հիւանդները կրկրժկէ Hypnotisme-ի ազդեցութեան ներքոյ և հիւանդութեան կը հրամայէ դուրս գալ և արդիւնքն գործնական կըլլայ։

Dr. Lee աւելի կատող Hypnotismով քնացուց երիտասարդ մը. դրին այս կիսամեռ երիտասարդն սնդուկի մը մէջ, սնդուկին վրայ ծակ մը կար, որուն միացուցին խողովակ մը և թաղեցին միայն շնչող երիտասարդն 6 ոտք խորունկ փոսի մը մէջ. հող, քար ամենն ալ վրան թափեցին, ամեն բան հողին տակ արին, մնաց միայն խողովակի ծայրն ուրկէն քնացող երիտասարդն պէտք ևգածին չափ շունչ պէտք է առնէր։ 6 օր քնացաւ տղան և ապա փոսն փորեցին և երիտասարդն դուրս բերին. 5 րոպէի մէջ Dr. Lee արթնցուց տղան. կշռեցին և տեսան որ 6 օր քնացող էակն 11 լիպրայ ծանրութիւն կորուսած էր. զարմանալի է այս գիտութեան յառաջացումն, բժշկական շրջանն պիտի յեղաշրջէ և անթիւ օգուտներ պիտի գործէ անճար մարդկութեան։

—Նախագահական ընտրութեանց պայքարն արդէն սկսուած է. այնպէս կը թուի թէ սրծաթի կուսակցութիւնն պիտի յաղթուի. մաքսապաշտք և ոսկիի ստանդարտ կուսակցութիւնն միացած են և իրենց բոլոր զօրութեամբ հարաւի և արևմտեան բոլոր առաջնորդներու ուժն կոտրել կը ջանան։ Կանանց բարեսիրական ընկերութիւնն, որ Փրանսի Վիլյարդի նախագահութեան տակ միլիոնաւոր անդամներ ունի, շրջաբերականներ ցրուած է ամեն ուրեք հասարակաց կարծիքն յուզելու և հայոց մարդասիրական դատն կառավարութեան սեղանին վրայ դնելու համար։ Սոյն ընդարձակածաւալ միութեան գործադիր անդամներէ բաղկացեալ մասնախումբ մը Նոր-Եորք հասաւ և դիմեց գաղթականութեան վարչութեան որպէս զի թոյլ տան գաղթական հայոց ներս մտնել Ամերիկայի ասպնջական հողոյն վրայ. կը ջանան նաև Արևմտեան նահանգաց միոյն մէջ տեղ տալ այս նորահաս գաղթականաց։ Նաև յանձն առած են երկու երեք ամիսներ տուն և կերակուր տալ թուրքին սուրէն փախած այս թշուառներուն։ Խմբերն բարեսիրական շրջաններէ սկսած են բարձրանալ դէպ վաճառականաց շրջանները. թերթերը միաձայն (ի բաց առեալ Նոր-Եորք Հերալդն) անմիջական օգնութիւն կը քնդրեն ժողովրդէն։ Գլադստոնի բանախօսութիւնն և Հարկուրդի նոր շարժումն աստ ազատականաց մէջ, նոր յուզում յառաջ բերած է։

Ծովենց

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Գլադստոնը իւր մի նոր նամակի մէջ ասում է, թէ չի կարող հրաժարուել Լիվերպուլում իւր խօսած ճառի ոչ մի խօսքից։

—

Հայ կաթոլիկների պատրիարք Ազարեանը, «Նովոստի» լրագրի ասելով, ապառնա-

կան նամակ է ստացել հայ մահնաժողովից։

—

Ափրիկէի գաղի մասին «Berl. Tageblatt»-ի Կ. Պոլսի թղթակիցը հոկտ. 5-ից (17-ից) գրում է. «Այսօր սիսուեցաւ մի աղմկայոյզ քաղաքական գործի քննութիւնը։ Հայ հարուստ Ափրիկէի մեղադրւում է պետական դաւաճանութեան և դաւադրութիւն սալքելուն համար։ Ազգաբաղատութեան մինիստրութեան դահլիճը, ուր նիստ ունէր այդ գործի քննութեան համար նշանակուած արտակարգ դատարանը, այն աստիճան լիքն էր ժողովրդով, որ ասեղ գցելու տեղ չէր մնացել։ Շոգը անտանելի էր։ Ոստիկանութիւնը զգուշութեամբ էր կարողանում զսպել դատարանը մտնել ցանկացող ժողովրդին։ Սեղանի վրայ նիւթական ապացոյցների հետ միասին դրուած էին զանազան նամակներ ու փաստաթղթեր, որոնք գտնուած են Ափրիկ էֆէնդու մօտ կատարուած խուզարկութեան ժամանակ, նամանաւանդ և հայկական ապագայ դրօշակը։ Ամբողջը լցրել էր դատարանի շինութեան ոչ թէ միայն բոլոր միջանցքները, այլ և մինչև անգամ ամբողջ հրապարակը»։ Դատավճիռը յայտնի է։

—

Հայ յեղափոխականների փախուստը։ Berl. Tag.»-ի Կ. Պոլսի թղթակցի ասելով, լուր է տարածուած, թէ տասը հոգի հայ յեղափոխականներ են փախել թըրքական բանտից։ Ոստիկանութիւնը եռանդով որոնում է փախստականներին։ Փողոցներում յայտարարութիւններ են փակցուած, որոնցով ժողովուրդը հրաւիրւում է օգնել ոստիկանութեանը փախստականներին գտնելու և յորդոր է կարդացւում չվախենալ, եթէ փախստականներին բռնելիս փողոցային անկարգութիւններ ու խռովութիւններ լինին։

—

Թուրքիայի ֆինանսական դրութիւնը բարւոքելու միջոց է հնարել սուլթանի կառավարութիւնը։ Դոնէ դրանով է բացատրում և «Vossische Zeitung»-ի Կ. Պոլսի թղթակիցը Ափրիկ էֆէնդու և ուրիշ հարուստ հայերի դէմ յարուցուած դատերի թագնուած նպատակը։ Այսպէս, բացի Ափրիկ-էֆէնդու հսկայական կարողութիւնից, որ անշուշտ կը գրաւուի յօգուտ սուլթանի գանձարանի, նրա դատապարտութեամբ Դուռը կաղատուի իւր անթիւ պարտատէրերից մէկից, որին նա պարտ է 80,000 ոսկի արքունական կապալների համար։ Թղթակիցը նկատում է, որ աղքատ հայերին կոտորելուց յետոյ, Դուռն այժմ իրեն նպատակ է դրել կողոպտել հարուստներին։

—

Ռեֆորմները։ «Pester Lloyd»-ը հետեւեալ տեղեկութիւնները է ստացել Կ. Պոլսից, մի բարձրաստիճան անձից. «Լատատեղեակ շրջաններում շատ բան չեն սպասում ապագայ ռեֆորմներից. Սուլթանին մօտ եղող անձերն ասում են, որ այն հատատութիւններն, որ մտցուելու են ռեֆորմները, յուսալի չեն։ Գրաֆ Գոլուխովսկին նոյն միտքը յայտնեց, երբ խօսում էր Ֆաբլէյէ (պալատական հին-թուրքերի կուսակցութիւնը) մասին, որը սուլթանին զրգռում է ռեֆորմների դէմ։ Ազատամիտ թուրքերը, մանաւանդ շատ մոլլաներ և սոֆտաներ, սարսափով սպասում են կայսրութեան անկման, որը, նրանց կարծիքով, տեղի կունենայ ոչ թէ Թուրքիայի բաժանմամբ եւրոպական պետութիւնների միջև, այլ նրանով, որ զանազան գաւառներ աստիճանաբար և վճռական կերպով կանջատուին Թուրքիայից։ Թրքական ռեֆորմների կուսակցութիւնը կարծում է, որ այդ բոպէն արդէն մօտ է»։

—

Փորը պետութիւնները եւ Թուրքիան։ Անցեալները Միացեալ-Նահանգների, Սպանիայի, Շուէդիայի, Նորվեգիայի, Ռումինիայի, Հոլլանդիայի և Բելգիայի Կ. Պոլսի ներկայացուցիչները մի հատաքանչ գործ են յայտարարով դիմել էին Դրանը, որի մէջ գանգատւում էին, որ թուրքաց կառավարութիւնը բանակցում է միայն մեծ պետութիւնների դեսպանների հետ, իսկ միւս պետութիւնների ներկայացուցիչներին ոչինչ չի հաղորդում։ Կ. Պոլսից հեռագրում են, որ այդ յայտարրի պատասխանն երկար ժամանակ չէր ստացուում։ Այնժամանակ փոքր պետութիւնների ներկայացուցիչները դիմեցին Թրքական արտաքին գործերի մինիստրութեանը, պահանջելով, որ կառավարութիւնը պատասխան տայ։ Մինիստրութիւնը պատասխանեց, որ իրեն ոչինչ յայտնի չէ այդ յայտարրի մասին։ Վերջապէս մի քանի ժամանակից յետոյ յայտարրը գտնուեցաւ մի ինչ որ ծրարի մէջ, և պատասխանը գրուեցաւ։ Այդ պատասխանի մէջ, ի միջի այլոց, ասւում է. «Թուրքաց կառավարութիւնն աննշան է համարում այն պետութիւնների հպատակների թիւը, որոնց ներկայացուցիչները հանդիսանում են բողոքարկուները, ուստի և կարծում է, որ այդ պետութիւնների Թիւրքիայում ապրող հպատակների համար աւելի քիչ վտանգ կայ, քան մեծ պետութիւնների հպատակների համար»։ Այնուհետև պատասխանի մէջ հաղորդւում է, որ Դուռն այն ժամանակ խիստ զբաղուած էր։ Վերոյիշեալ եօթ պետութիւնների ներկայացուցիչները հրաժարուեցին ընդունել իրենց ստացած պատասխանը և դիմեցին Դրանը մի նոր առաջադրութեամբ, որի մէջ պահանջում են, որ իրենց էլ առանձին և լիակատար տեղեկութիւններ տրուեն այն ամենի մասին, ինչով վերաբերում է ընդհանուր շահերին։

—

ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վէնայից իրեն լուր հաղորդում են, որ Թուրքաց նախկին մեծ վեզիր Սայիդ-փաշան նորից կըստանձնէ այդ պաշտօնը։

—Ֆրանսիական «Gaulois»-ն ասում է, որ Անգլիայի և Ֆրանսիայի իրար մերձեցումը հնարաւոր է այն պայմանով, որ վճռուի եգիպտական խնդիրը։ Դիւանագիտական շրջաններում տարածուած են ցոյց տալիս Եգիպտոսի չէզոքացման օգտին։

—Կիսապաշտօնական «Schlesische Zeitung»-ի ասելով, գերմանական կառավարութիւնը լրջօրէն զբաղուած է արևելեան Ասիա միասիա ուղարկելու խնդրով։ Գերմանական կառավարութեան նպատակն այն է, որ ինքն էլ նոյնպիսի գրութիւն ձեռք բերէ, որպիսին ձեռք են բերել Ֆրանսիան և Ռուսիան Սիմոնոսեկի գաշնադրութիւնից յետոյ, և միևնոյն ժամանակ ապահովէ Գերմանիայի առևտրական շահերը։ Դրա համար Գերմանիան ուզում է հող ձեռք բերել Հինաստանի արևելեան ափին։

—«Yossische Zeitung»-ն ասում է, որ ներկայ դրութեան ամենանշանաւոր գործօնը հանդիսանում է անգլո-ռուսական տարաձայնութիւնը։ «Ոչ թէ Գերմանիան կամ եռապետական դաշնակցութիւնը, այլ Անգլիան պիտի հատուցանէ Ֆրանս-ռուսական հանդէսների համար», —աւելացնում է այդ լրագիրը։

—Աթէնքում այս օրերս զինուորական դատարանը քննում էր յունաց զօրքի ութ սպաների գործը, որոնք մեղադրւում էին զօրքերից Կրետէ փախչելուն և այնտեղի ապստամբների հետ միանալուն համար։ Դատարանն արդարացրեց բոլորին էլ, և հասարակութիւնը, որ լցուել էր դահլիճը, ցնծագին ծափահարութեամբ ընդունեց այդ դատավճիռը։

—«Հաւասի գործ.» ասելով, Հռոմի պապն այս օրերս մի մասնաւոր ունկնդրութեան ժամանակ խիստ շատ խօսել է ֆրանսիական քաղաքականութեան և մանաւանդ վերջին անցքերի մասին։ Նա զոհունակութիւն է յայտնել ֆրանս-ռուսական հանդէսների առթիւ և յոյս է յայտնել, որ Ֆրանսիան այժմ իրեն

վայել դիրքը կզբաւէ եւրոպական ազդութիւնների միջև։

—Միացեալ-Նահանգներում նախագահական ընտրութեան նախապատրաստական ագիտացիան առաջուայ պէս եռանդով շարունակւում է։ «Times»-ի ասելով, ընդհանուր կարծիքն այն է, որ նախագահ կընտրուի Մակ-Կինլէյը։ Նրա մրցակից Բրիանը արևմտեան նահանգներում տաք ճառեր է խօսում։ Մակ-Կինլէյը հետևում է նրա օրինակին, բայց երկու հակառակորդներն արդէն ամեն բան ասել են, ինչը ունէին ասելու, և այժմ միայն կրկնում են իրենց ասածները։

—«Nord. Allg. Zeit»-ը հերքում է այն լուրը, թէ գերմանական կանցլերը իշխ. Հոհենլոէն պատրաստւում է նոյեմբերին այցելել Պետերբուրգ։

—Բելգիոն քաղաքական շրջաններում կարծում են, որ Վիլհելմ կայսրը չուտով հրաման կարձակի ռայխստագն արձակելու։

—Վիլհելմ կայսրը հեռագրով հարցրել էր իշխ. Բիսմարկի առողջութիւնը, որը վերջին ժամանակս վատացել է։ Իշխ. Բիսմարկը պատասխանել է, որ իրեն թոյլ է զգում, և ուելացրել է, թէ մի բան, որ մանաւանդ անհանգստացնում է իրեն, այդ այն է, որ այլ ևս հաճոյք չի զգում ծխախոտ ծխելուց։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՀՎԵՐԻՒ, 13 հոկտեմբերի. – Պալատական եկեղեցում տեղի ունեցաւ Օլդենբուրգեան հերցոգի պսակադրութեան արարողութիւնը Մեկլենբուրգ Շվերինի արքունեաց ելիսաբէթի հետ։

ԼՈՆԴՈՆ.—«Times»-ն ասում է, թէ Իտալիայում խիստ զժգոհ են, որ իտալական շահերը չարունակ ստորադասւում են գերմանական շահերին. այս բանից Իտալիայում այն եզրակացութեան են եկել, որ Իտալիան եռապետական դաշնակցութեան մէջ մնալուց վնասւում է։

ՄԱԴՐԻԴ.—Նեգապատամում երկաթուղու 5,000 բանուորներ գործադուլ արին, որից անկարգութիւններ ծագեցին։ Ամբոխը փորձեց աւերի մատնել ապրանքների պահեստը։ Յուսիկանութիւնը ստիպուած էր հրազէնի դիմել։ Սպանուած է 200 հոգի, չատերը վիրաւորուած են։

ՄՈՋԱՄԲԻԿ.—Ալբուկերկի նահանգապետը պորտուգալական 300 զինուորներով և 180 տեղացիներով մօտերս կռուի գուրս գնաց Մանիկեան հողը և Մաջինգու մօտ բանակ դրեց. բայց մօտ 2,000 նամիրալոսներ յարձակուեցան նրա վրայ։ Պորտուգալացիները քաջութեամբ պաշտպանւում էին 22 ժամ, բայց ստիպուած էին յետ նահանջել ջրի պակասութեան պատճառով. նրանցից սպանուեցին 2 և վիրաւորուեցան 45 հոգի. վերջիններիի թւումն է նահանգապետը։

Կ. ՊՈԼԻՍ.– Սուլթանի մի իրադէով կարդադրւում է Թրքական պետական բիւջէի 25% դէֆիցիտը լրացնել վարչական բոլոր ծախքերի արտակարգ քշտումով։

Ինչպէս լսում է, այն ծրագիրը, որով $2^1/_2$ միլիոն Թրքական ոսկի հաւաքելու համար, առանց կրօնի խտրութեան, ամենքից 5-ից մինչև 250 պիաստր պիտի հաւաքուի, ըստ երևոյթին, կիրագործուի։ Այդ գումարը նշանակուած է զինուորական գանձարան կազմելու և բոլոր մահմետական բնակիչների համար զէնք գնելու, որպէսզի ամենամեծ կարիքի ժամանակ ժողովրդական մի տեսակ պաշտպանութիւն կազմուի։ Վերջին հանգամանքը գրաւում է դիւանագէտների ուշադրութիւնը։

Կ. ՊՈԼԻՍ.—Թեսպանները մի հաւաքական յայտագիր տուին Դրանը, որով խնդրում են, որ նա բացատրէ արտակարգ տուրքի մասին լուրերը։

ԹԵՐԵՒ ԴԷՄ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մի քանի անգամ առանց խտրութեան Ձուչու ամբողջ հոգևորականութեան պատիւը չօշափել են մի երկու լրատուներ։ «Նոր-Դար»-ի 165 համարում պարոն Է ն ի միջի այլոց գրում է. «Քարոզի էական կողմերը պէտք է լինի որ ասէ սիրէր զընկերը քո, գնա եկեղեցի, աղօթիր, ողորմութիւն տուր աղքատի... Բայց այս կամ սրա նման խօսքեր կարող է ասել մեր քարոզիչը, երբ ինքն ոչ սիրում է իւր ընկերին, ոչ եկեղեցի է գնում, դեռ միւս պակասութիւններն էլ մի կողմը դրած...»

Ես էլ համաձայն եմ պարոն Է.-ի հետ, որ քարոզչի գլխաւոր խօսակցութիւնը պէտք է լինի ընկերասիրութիւն, մարդասիրութիւն. իսկ ճշմարիտ անկեղծ մարդասիրութիւնը աստուածասիրութիւն է։ Ուրեմն եթէ մէկը կատարում է մարդասիրութեան սրբազան պատուէրը, կատարում է և աստուածասիրութեան պարտքը և դրանցով էլ կատարած է լինում միւս բոլոր պատուէրները համաձայն սուրբ աւետարանի «սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն մտաց քոց և յամենայն զօրութենէ քումմէ. նման սմին սիրեսցես զընկերդ քո իբրև զանձն քո յայս երկուս պատուիրանս կախեալ կան ամենայն օրէնք և մարգարէք»։ (Մատ. ԻԲ. 38.)

Իսկ ինչ վերաբերում է այս խօսքերին թէ «մեր քարոզիչները լինչպէս կարող են ասել այս խօսքերը քանի որ իրենք ոչ եկեղեցի են գնում և ոչ էլ սիրում են միմեանց», ընդհանուրի վերաբերմամբ կասեմ որ այդ աննեղելի սխալ է։

Ես իրրև քահանայ գիտեմ որ կան քահանաներ [1]), որոնք ոչ ոքի հետ խռովութիւն չունին, գիտեմ որ կայ քահանայական միաբանութիւն, որ աչքի է ընկնում թէ իւր համերաշխ գործունէութեամբ և թէ քահանայավայել սիրով և այն ոչ թէ այժմ, այլ տասնեակ տարիներից սկսած մինչև օրս։ Այս գիտէ և Ձուչու քահանաների բարոյականով հետաքրքրուող բարեխիղճ հայ ժողովուրդը, գիտէ և տեղական հոգ. իշխանութիւնը, որը շատ անգամ է գոհունակութիւն յայտնել այդ խաղաղ միաբանութեան [2])։

Ես չեմ ուրանում որ դժբաղդաբար կան մեր մէջ քահանաներ, որ նիւթականի պատճառով տեղիք են տալիս խռովութիւնների և ընդհանուր քահանաների անպատուութեան, բայց յարգելի լրատուներն ուրանում են, որ կան բացառութիւն կազմող քահանաներ էլ։ Ցաւում եմ որ լրատուներն այդքան նախատական խօսքերը դէպի քահանաները չառայելով, դժբաղդութիւն են համարում մի երկու տողով տեղական հոգ. իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրել դէպի իւր ստորադրեալները, դէպի դրանց խռովութեան սկզբնապատճառը։

[1]) Այդպիսի քահանաներին մենք էլ ենք յարգում ի սրտէ բայց բանն այն է, որ ոչ անհատները «հոգևորականութիւն» են կազմում և ոչ էլ կարող են այդպիսի անձնաւորութիւնները ընդհանուրի արատները ծածկել։

Ե. Խ.

[2]) Ճատ ուրախ կլինէինք եթէ այդպէս լինէր, և մեր համոզմունքը զոնէ մի քանիսի վերաբերմամբ սխալ լինէր։ Ե. Խ.

Միթէ հոգ. իշխանութիւնը չէ կարող արդարի իրաւունքը պաշտպանելով մեղաւորին պատժել միւսների զգուշութեան համար [3])։ Միթէ անխիղճ քահանաների իրաւացի կամ անիրաւացի անպատուութիւնը իրեն պատիւ և զուարճութիւն է բերում։ Միթէ ինքը չպիտի անուղղայ քահանաներին յորդորներով հակառակ դէպքում էլ խաթիւ ուղղութեան հրաւիրէ. էլ ինչու համար է [4])։

Ձուչի. Խորէն քահանայ Իսկենդարեան։

[3]) Այո կարող է, բայց չի անում ընդհանրապէս։ Ե. Խ.

[4]) Այո պէտք է, պէտք է անի, այդ նրա պարտականութիւնն է. բայց չէ որ այդ «անուղղաները» առիթ կունենան «բժիշկ բժշկեա զանձն քո» պատասխանելու։

Ե. Խ.

Պատասխանատու խմբագրի՝
ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոյս տեսաւ
ԷՄԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
ԴԱՄՈԿԼԵԱՆ ՍՈՒԻՐ
2 պարբուածով դրաման։
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Վաճառւում է Թիֆլիսում Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում, իսկ երևանում հեղինակի մօտ։ 5—3

„ԲԱՐԻ ԳԻՇԵՐ“
Բացառիկ յատկութիւն ունեցող փոշի միջատների դէմ։
ՄՈՍԿՈՒԱՑԻ Ի. ԿՆՕՐԻՆ և ԸՆԿ.
ԳՈՐԾԱՐԱՆԻ
անունան մասնագիտութիւն։

ԽԱԽՈՒՄ Է ՄԵՌ ՏԵՂ ամենից աւելի նշանաւոր վաճառականների մօտ։

(Մ.) 15—6

Удостоившееся награды національной академіи земледѣлія, промышленности и торговли въ Парижѣ,
Письменное преподаваніе двойной бухгалтеріи на русскомъ и нѣмецк. языкахъ, вполнѣ замѣняющее устное преподаваніе. Масса благ. и отличн. отзывовъ. Окончившимъ, по желанію, выдаются удостовѣренія объ изученіи предмета подъ моимъ руководствомъ. Преподаватель бухгалтеріи членъ національной академіи земледѣлія, промышленности и торговли въ Парижѣ,
А. Н. ЯНКОВСКІЙ
ВЪ РИГѢ.
Условія и подробныя письма высылаются безплатно
Предостерегаю отъ подражаній.
Полная гарантія успѣха. Плата умѣренная.
(М.) 10—10

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
SaNTAL MIDY
Պարիզի դեղագործի պատրաստած, է թոյլատրուած է Ռուսիայում։
Նոր կապսիւլների մէջ պարունակւում են մաքուր սանտալի էսանցիա։
Պահեստն է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։
(Մ.) 33—32

Ամանեղէնի և զալանտերէյ ապրանքների պ. պ. վաճառականներին
ԳՐԱՖ ԴԱՐՐԱԽԻ գործարանի պահեստն առաջարկում է մեծ քանակութեամբ բրիմազան յախճապակեայ իրեր և սեղանի պարագաներ։
MOCKBA, Кузнецкій мостъ, д. Санъ-Галли.
(М.) 1—1.

Փետրուարի մէկից 1897 ամի երեք տարի ժամանակով կապալի տրւում է նախկին ՅՈՆԱՆԵԱՆ ԿԱՐՎԱՆՍԱՐԱՆ, որ գտնւում է Սիոնի փողոցում։ Պայմաններին կարելի է տեղեկանալ քարվանսարայի կառավարիչ Զ. Խ. Գալուստեանից յետ 15 սեպտեմբերի 1896 ամի։ Իսկ աճուրդի օրը կլրայտնուի առանձին յայտարարութիւնով։
(703) 3—2

Արդէն լոյս տեսան առաջիկայ 1897 թ. մեր աշխատ.
ԾՈՅԻ, „ՊԱՏԻ“ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
ԱՒԵԼԻ ՀԱՐՍՏԱՑՐԱՆ ԵՒ ՀԱՐՍՏԱՑՐԱՆ
Ծանկացողները թող չտապեն մեզ հաղորդելու, որպէս զի պատուէրները կարողանանք իր ժամանակին հասցնել։
Մեկը 2մշկեան.
(670) 24—2

Ներսիսեան Հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդարանում տարոյս հոկտեմբերի 16-ին երեկոյեան 8 ժամին լինելու է Ա.ՃՈՒՐԴ կալով տալու դպրոցին պատկանեալ 21 կրպակները, որոնք գտնւում են Ներսիսեան դպրոցի հին շինուածքեան հանդէպ, Կուկնիչեի փողոցում։ Պայմանաժուղմը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—2 ժամը։
(665) 1—1.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակում և գրավաճառանոցներում վաճառւում են ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները։

82	Շիլհօնի կալանաւորը, Մ. Հարտմանի, Ի. Կ. Դիւլնազարեան	—	60
83	Համլէտ Շէքսպիրի, Թ. անգ. Ցով. խան Մասէհեանի	—	75կ
84—87	Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Գարագաշեանի չորս հատ	4	—
88	Պատմ. Հայոց, բ. տպ. Մ. Պալասանեանի	1	50
89	Ակնոյ հնութիւնք, Յ. Ճանիկեանի	2	—
90	Ուրբինօեցի մանուկը, Ույդի զրոյցներից	—	10
91	Կօչիկաւոր երաժիշտ, Տիւշեվի	—	5
92	Խնձորենիների երկրում, Ույդի զրոյցներից,	—	10
93	Երկու եղբայր, հեղ. տիկ. Մօնգօմերի Թարգմ. Գ. Գ.	—	60
94	Մեծապ. Մուրաց., գ. տպ. Յ. Պարոնեանի.	—	40
95	Նախագիտելիք բուսաբանութ. Ա. Քիշմիշեանի	—	80
96	Հազարից մէկը, Ն. Մամիկոնեանի.	—	60
97	Ինչպէս կուզէք, Շէքսպիրի. Թ. Յ. խան Մասէհեանի	—	50
98	Դպրոցական առողջապահ. բժ. Վ. Արծրունի	—	50
99	Կեղեքիչ. վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկոյի	—	10
100	Գուռզ արմաւենի,	Վ. Գարշինի,	—	5
102	Գուռզ Ագգէն,	Թարգմ. Հ. Ա-	—	5
103	Ճանապարհորդ կորաը,	ռաքելեան.	—	3
104	Մանկական լօտօ, պատկերներով		1	20
105	Գետնափորի երեխան. Թ. Շիրվանզադէ		—	15
106	Վրէժ, Գիւի դը-Մօպասանի, Թ. Լ. Մ. Ադամեանի.		—	5
107	Ակամայ մարդասպան, Թարգմ, Տ. Յովհաննիսեանի		—	15
108	Մուֆլու. Ույդի, Թարգմ. Յ. Օհանեանի.		—	10
109	Աներեւոյթ հոգագործ.		—	7
110	Նապաստակ, Սլիվիցկու Թարգմ. օր. Ն. Ղուլիջանեան		—	7
111	Ծերունի Մարկօն, Իւրլ Եակիչի. Թարգ. Մեղնիկեանի		—	10
112	Ռոմէօ և Ջուլիէտ, Շէքսպիրի, Թ. անգ. Յ. խան Մասէհեանի		—	60

(448) 16—12

Լոյս տեսաւ
ՍՐԿ. Ց. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ
„ՄՈՒՏՅՈՒՆՔ ԱՇԽԱՐՀ“
ԵՐԳԱՐԴ դիրք
Վաճառւում է բացառապէս «Կենդրոնական գրավաճառանոցում» և հեղինակի մօտ

Ա.	դիրքը (173 երես) արժէ	60	կ.	Ա. և Բ. միասին	1 ր.
Բ.	» 244	»	» 50	»	
Գ.	173	»	» 40	»	երկքը 590 եր. 1 ր. 25 կոպ.

Յարգելի հայ ուսուցիչներին, ուսումնասէր աշակերտներին և աշակերտուհիներին կըզիջինք 30% մեզ դիմած դէպքում միայն։ Դասարդով գնողներին դիջումն կըլինի։
Ապառիկ կամ առանց վերադիր (безъ налож. плат.) չենք ուղարկիլ ոչ մի գրավաճառի և ոչ էլ այն արժանապատիւ հայրերին (ազգանունները պետ չենք յիշում) և այն պարոններին, որոնք մեր վստահութիւնն ի չարը գործադրեցին ա. և բ. գրքերի վերաբերութեամբ։
Գոստի միջոցով մեզ դիմողները պէտք է ուղարկեն ճանապարհածախս իւրաքանչիւր գրքին մի-մի 5կոպէկանոց մարկ. (արտասահմանից երկ երկու 7 կոպէկանոց)։
Հասցէ՝ – Редакція „Норъ-Даръ“ Архидіакону Арутюну Джугурянцъ
5 – 5

Тифлисъ Дозв. цензурою 15-го Октября 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ